ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՍՊ-ԷԱՃ-ԱՊՁԲ -19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի

(Հայտերի գնահատման նիստի ամփոփման մասին)

ք. Երևան *5.12.2018թ.*

Ժամը՝ 17:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Լ. Վարդանյան*

Անդամներ՝ *Ա. Կարապետյան*

Գ. Քոչարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Մ. Պողոսյան*

1. ՍՊ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2 ծածկագրով՝ ԷԱՃ ընթացակարգի մրցույթի արդյունքների ամփոփման մասին.

2019 թվականի կարիքները բավարարելու համար *սպորտային հագուստ, կոշիկ-այլ պարագաներ ձեռք բերելու նպատակով* «ՍՊ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության շենքում, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում՝ էլեկտրոնային գնումների eauction.armeps.am կայքով, 2018 թվականի դեկտեմբերի 5-ին, ժամը 17:00-ին:

Հաշվի առնելով «ՍՊ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից մասնակցի ներկայացրած որակավորման փաստաթղթերի բավարար գնահատումը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եղրակացությունն այն մասին, որ նշված ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «էլիտ-սպորտ ՍՊԸ –ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1 «էլիտ-Սպորտ» ՍՊԸ –ին ճանաչել հաղթող:

2.2 Հաստատել «ՍՊ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքում «էլիտ-Սպորտ» ՍՊԸ- ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով “Գնումների մասին” ՀՀ օրենքի

10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- *Լ. Վարդանյան*

Անդամներ՝ ---------- *Ա. Կարապետյան*

---------- *Գ. Քոչարյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- *Մ. Պողոսյան*